Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Մայրության պաշտպանության կոնվենցիայի, 2000 թ. (թիվ 183) օրենսդրական կարգավորման ազդեցության գնահատումը (ՕԿԱԳ)

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամը և Մարդու իրավունքների հետազոտական կենտրոնը (ՄԻՀԿ) ՀԿ-ն ՄԱԿ-Կանայք կազմակերպության հետ համատեղ իրականացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Մայրության պաշտպանության կոնվենցիայի, 2000 թ. (թիվ 183) օրենսդրական կարգավորման ազդեցության գնահատումը (ՕԿԱԳ) Հայաստանում, որի նպատակն է ուսումնասիրել կոնվենցիայի վավերացման հեռանկարները և խթանել քաղաքական երկխոսությունը այդ ուղղությամբ: Ուսումնասիրությունն իրականացվել է ՄԱԿ-Կանայք կազմակերպության «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» (WEESC) ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Ավստրիական զարգացման համագործակցություն (ADC) կողմից

ԱՄԿ Մայրության պաշտպանության մասին կոնվենցիա

- ԱՄԿ Մայրության պաշտպանության մասին կոնվենցիան (թիվ 183), այսուհետ՝ Կոնվենցիա, ընդունվել է 2000 թվականին և օրինական ուժի մեջ է մտել 2002 թվականին այն վավերացրած ԱՄԿ անդամ պետությունների համար:
- Թիվ 183-րդ կոնվենցիան ներկայացնում է աշխատող կանանց շրջանում մայրության պաշտպանության ապահովման նվազագույն չափանիշները, այդ թվում՝ մայրության արձակուրդի նվազագույն տևողությունը, նվազագույն նպաստների չափը, հղի և կրծքով կերակրող կանանց համար առողջ աշխատանքային պայմանների ապահովման պարտավորությունը, մայրության հիմքով խտրականության արգելքը և կրծքով կերակրող կանանց համար լրացուցիչ օրական աշխատանքային ընդմիջումների տրամադրման մանրամասները:
- Կոնվենցիայի հետ մեկտեղ ընդունվել է Մայրության պաշտպանության մասին թիվ 191 հանձնարարականը (այսուհետ՝ Հանձնարարական), որը պարտադիր իրավական ուժ չունի, բայց հանդիսանում է կոնվենցիայի դրույթները մեկնաբանող և պետությունների համար ուղղորդող նշանակության կարևոր փաստաթուղթ:
- Մինչ այժմ Կոնվենցիան վավերացվել է ԱՄԿ անդամ 43 երկրների կողմից:



Նկարը՝ այստեղից

Խնդրի սահմանում և ելակետային սցենարի ներկայացում

- ՕԿԱԳ-ը **կենտրոնանացած է հղի և կրծքով կերակրող կանանց աշխատավայրում մասնագիտական ռիսկի գնահատումների արդյունավետ ազգային համակարգի բացակայության** խնդրի վրա:
- Ներքին օրենսդրական դաշտը բավարար չէ հղի և կրծքով կերակրող կանանց համար առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու համար՝ ենթանորմատիվ իրավական կարգավորումների անհամապատասխանության և աշխատանքի առողջության և անվտանգության մեխանիզմների հիմնական համակարգի խնդիրների պատճառով:

Հղիությունը, ծննդաբերությունը և ծննդաբերությունից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածը էական բեռ են կանանց՝ առողջության համար և էականորեն ազդում են կանանց՝ աշխատաշուկայում ներգրավվելու հնարավորությունների վրա: Հղիության և կրծքով կերակրման ընթացքում զբաղվածությունը պահպանելու առումով կանանց համար որոշիչ գործոններից են աշխատավայրում գործատուի կողմից այնպիսի ռիսկերի և վտանգների գնահատումը և կառավարումը, որոնք կարող են ազդել կնոջ և նրա երեխայի առողջության վրա:

Նկարը՝ այստեղից

Խնդրի սահմանում և ելակետային սցենարի ներկայացում

Պատշաճ կերպով չգնահատվելու և չհասցեագրվելու դեպքում աշխատավայրի ռիսկերը կարող են ունենալ նաև սոցիալ-տնտեսական հետևանքներ. կանայք կարող են թողնել աշխատանքը, ինչն իր հերթին կարող է ազդել հղիության և մայրության ընթացքում նրանց և նրանց ընտանիքների եկամտային ապահովության վրա:

Դաշտային աշխատանքների արդյունքում վերհանված խնդիրները՝

- գործատուները հիմնականում չեն իրականացնում աշխատավայրում առողջության պաշտպանության ռիսկերի գնահատում
- երբ խոսքը աշխատավայրում հղի և կերակրող կանանց առողջության պաշտպանության մասին է, շատ բան կախված է գործատուների սոցիալական պատասխանատվության մակարդակից
- գործատուներն ընդհանուր առմամբ բարենպաստ միջավայր չեն ապահովում և՛ շատ հաճախ դա պայմանավորում են սակավ ռեսուրսներով՝ և՛ ֆինանսական, և՛ մարդկային (օրինակ՝ գիտելիքներ, կարողություններ և այլն)
- խնդիր է հղի և կերակրող մայրերի համար առավել ճկուն աշխատանքային պայմանների, մասնավորապես ճկուն աշխատանքային գրաֆիկի ապահովումը

Նկարը՝ այստեղից

Խնդրի սահմանում և ելակետային սցենարի ներկայացում

Սույն գնահատման շրջանակում ***շեշտադրվել է հղի և կրծքով կերակրող կանանց աշխատավայրում մասնագիտական ռիսկի գնահատման արդյունավետ ազգային համակարգի բացակայության խնդիրը***՝ հաշվի առնելով աշխատողների անվտանգության և առողջության պահպանման խնդիրների առաջնահերթությունը և ՀՀ Կառավարության ներկայիս քաղաքականության ուղղությունները:

Միևնույն ժամանակ հատուկ ուշադրությունը հղի և կրծքով կերակրող կանանց մասնագիտական ռիսկերին և վտանգներին և ուսումնասիրության գենդերային համատեքստը, որը C183-ի կենտրոնական խնդիրներից է, դեռ արտացոլված չէ Կառավարության քաղաքականության փաստաթղթերում:

Նկարը՝ այստեղից

Էլակետային սցենարը փոխելու համար անհրաժեշտ միջամտության ընդհանուր և մասնավոր նպատակների ձևակերպում

ՕԿԱԳ վերլուծության և արդյունքների հիման վրա առաջարկվող Կառավարության միջամտության ընդհանուր նպատակ է. **ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային պայմաններ հղի և կրծքով կերակրող կանանց համար:** Միջամտության մասնավոր նպատակները հետևյալն են.

1. Ապահովել, որ ռիսկի գնահատման ստանդարտները ժամանակակից են (ռիսկի գործոնների վրա հիմնված) և արդյունավետ,
2. Ապահովել արդյունավետ մեխանիզմներ և ռեսուրսներ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին հղի և կրծքով կերակրող կանանց մասնագիտական ռիսկերի և վտանգների վերահսկման և աշխատողների գնահատման ուղղությամբ օժանդակություն ցուցաբերելու նպատակով:
3. Բարձրացնել կին աշխատողների պաշտպանության և իրազեկվածության մակարդակը հղի և կրծքով կերակրող կանանց առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման վերաբերյալ և նրանց օժտել համապատասպան կարողություններով՝ իրենց իրավունքների պաշտպանության դատական և արտադատական մեխանիզմները օգտագործելու համար:
4. Բարձրացնել աշխատակիցների բանակցային կարողությունները և լուծել առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման բարելավման խնդիրը սոցիալական երկխոսության շրջանակներում:

Նկարը՝ այստեղից

Միջամտության սցենարների մշակում

Ստատուս քվո սցենար

Այս սցենարի համաձայն գործող օրենսդրությունը չի թարմացվում, այլ թողնվում է ներկա տարբերակում, և հղի և կրծքով կերակրող կանայք չեն օգտվում իրենց առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման արդյունավետ պաշտպանությունից:

Քաղաքականության 1-ին տարբերակ

Տվյալ սցենարը պահանջում է օրենսդրական լուծումներ՝ հղի և կրծքով կերակրող կանանց առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման համար

Քաղաքականության 2-րդ տարբերակ

Տվյալ սցենարը պահանջում է մի շարք՝ օրենսդրական կարգավորում չենթադրող լուծումներ, մասնավորապես՝ շահագրգիռ բոլոր կողմերի զորեղացում և իրազեկվածության բարձրացում

Միջամտության սցենարների մշակում. քաղաքականության 1-ին տարբերակ

- **Վերանայել աշխատանքի անվտանգության և առողջության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը**: Փոփոխել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 258-րդ հոդվածը**, մասնավորապես՝** ա) ընդլայնել հղի և մինչև 1 տարեկան երեխաներին խնամող կանանց համար սահմանված երաշխիքների ծածկույթը՝ ներառելով կրծքով կերակրող բոլոր կանանց, անկախ նրա երեխայի տարիքից (անհրաժեշտության դեպքում կրծքով կերակրելու մասին բժշկական տեղեկանք ներկայացնելու պայմանով); բ) ամրագրել կնոջ իրավունքը՝ վերադառնալու իր նախկին աշխատանքին հղիությանն ու կրծքով կերակրմանն առնչվող ռիսկերի վերացումից հետո: գ) Սահմանել կին աշխատողի իրավունքը՝ ծանոթանալու իր գործատուի կողմից աշխատավայրի ռիսկերի գնահատման արդյունքներին, որի հնարավորությունը գործատուն պարտավոր է ապահովել:
- **Ընդունել ռիսկի գործոնների վրա հիմնված կարգավորող ուղեցույցներ, որոնք հնարավորություն կտան գնահատել հղի և կրծքով կերակրող կանանց առողջությանը սպառնող իրական ռիսկերը:**
- **Վերանայել ծանր, վնասակար և վտանգավոր աշխատանքների ցանկերը սահմանող ենթաօրենսդրական ակտերը,** մասնավորապես՝ Կառավարության 1698-Ն, 2308-Ն և 1089-Ն որոշումները:

Միջամտության սցենարների մշակում. քաղաքականության 1-ին տարբերակ

- **Մշակել, ընդունել և տարածել պարզ շարադրանքով ստուգաթերթեր** գործող օրենսդրական ակտերի հիման վրա՝ նպատակ ունենալով օժանդակելու գործատուի կողմից աշխատավայրում հղի և կրծքով կերակրող կանանց և նրանց երեխաների առողջության ռիսկերի գնահատմանը:
- **Սահմանել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի իրավասությունը պատասխանատվության ենթարկելու գործատուներին՝** այն դեպքում, եթե գործատուն չի իրականացրել աշխատավայրում ռիսկի գնահատում հղի և կրծքով կերակրող կանանց համար:

Միջամտության սցենարների մշակում. քաղաքականության 2-րդ տարբերակ

- **Ներառել հղի և կրծքով կերակրող կանանց աշխատանքի անվտանգ պայմանների խթանումը որպես քաղաքականության նպատակ համապատասխան գործողությունների պլանների և ռազմավարությունների ներքո** և ապահովել իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ հատկապես հասցեագրված գործատուներին և աշխատողներին:
- **Խթանել Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից գործատուներին խորհրդատվության և աջակցության տրամադրումը՝** ռիսկի պատշաճ գնահատման իրականացումը ապահովելու նպատակով:
- **Բարձրացնել հղի և կրծքով կերակրող կանանց իրազեկվածությունը՝** առողջ աշխատանքային պայմանների իրենց իրավունքի պաշտպանությանը հետամուտ լինելու մեխանիզմների վերաբերյալ:
- **Աշխատող հղի և կրծքով կերակրող կանանց առողջության պահպանման և անվտանգության ապահովման հարցը ներառել սոցիալական երկխոսության օրակարգ** և ազգային մեխանիզմների կատարելագործման միջոցների վերաբերյալ արդյունավետ քննարկումներ անցկացնել սոցիալական գործընկերների հետ:

Սցենարների ազդեցության վերլուծություն

Քաղաքականության 1-ին տարբերակի (օրենսդրական լուծումներ) հնարավոր ազդեցությունների բացահայտում

- Կարգավորող միջամտությունները կբերեն ազգային օրենսդրական և նորմատիվ դաշտը բավարար մակարդակի՝ աշխատանքային հարաբերություններում աշխատող հղի կամ կրծքով կերակրող կանանց առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար:
- Հիմնական դերակատարները (գործատուները և ԱԱՏՄ-ն) կշահեն ռիսկերի վրա հիմնված նոր կարգավորող ուղեցույցներից և ռիսկերի գնահատման համար հարմար գործիքների առկայությունից, որոնք թույլ կտան արդյունավետորեն գնահատել առողջական իրական ռիսկերը և հատկապես հղի և կրծքով կերակրող կանանց համար ռիսկերը և հետագայում վերահսկել գնահատման արդյունքները:
- ՀՀ առողջապահության և Աշխատանքի տեսչական մարմինը՝ որպես մշտադիտարկման հիմնական իրականացնող, այսուհետ կունենա վերահսկման բավարար լծակներ, ինչը կբարձրացնի գործատուների կողմից պատրավորությունների պատշաճ իրականացման մակարդակը:
- Գենդերային իրավահավասարության հեռանկարի իմաստով՝ գործատուի գնահատման արդյունքների մասին տեղեկացված շահագրգիռ կողմ դառնալու միջոցով կանայք ավելի մեծ ուժ կունենան գործատուների վրա ազդելու և ավելի լավ առողջապահական երաշխիքներ և աշխատավայրի հարմարեցում պահանջելու առումով:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

- Սոցիալական և տնտեսական հարթության մեջ ակնկալվում է, որ գործող արդյունավետ կարգավորող համակարգի առկայությունը կապահովի այն վտանգավոր պայմանների պատշաճ սահմանումը, գնահատումը և կառավարումը (օրինակ՝ ծանրաբեռնվածություն, որոշակի քիմիական նյութերի ազդեցություն և այլն), որոնց դեպքում հղի կանայք պետք է նշանակվեն կամ տեղափոխվեն այլ տեսակի աշխատանքի, ինչն իր հերթին կխրախուսի շատ կանանց ոչ թե հեռանալ, այլ շարունակել աշխատանքը:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Պետական բյուջեի ծախսերի ավելացման ուղղությունները.

- Աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված ռիսկերի գնահատման ուղեցույցների և գործիքների մշակման և ներդրման ծախսեր:
- Դասընթացավարների ուսուցման և վերապատրաստման փաթեթի մշակման, ինչպես նաև համապատասխան մասնակիցների՝ ԱԱՏՄ անձնակազմի, արհմիությունների և գործատուների միավորումների, գործատուների կարողությունների զարգացման միջոցառումների հետ կապված ծախսեր: Սա ենթադրվում է որպես մեկանգամյա ծախս:
- Լրացուցիչ անձնակազմի աշխատանքի ընդունման հետ կապված վարչական ծախսերի ավելացում վարձատրության և պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի վճարների համաֆինանսավորման ծախսերի գծով ԱԱՏՄ-ի կանխարգելիչ և վերահսկիչ լիազորություններն ընդլայնելու նպատակով:
- Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի մասնահանումների համաֆինանսավորման հետ կապված ծախսերի ավելացում այն հղի կանանց և կրծքով կերակրող մայրերի համար, որոնք աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման ռիսկերի գնահատման և կառավարման արդյունքում չեն լքել աշխատանքը:
- Որոշակի ծախսեր՝ կապված հղիների և կերակրող կանանց առողջության և աշխատանքային պայմանների դրույթների պահպանման հետ, սակայն այդ ծախսերը պետք է կատարվեն գործատուների կողմից և հավանաբար կփոխհատուցվեն այն փաստով, որ կանայք կգերադասեն պահպանել կամ վերադառնալ իրենց աշխատանքին հղիության ընթացքում և արձակուրդից հետո, ինչը հանգեցնում է աշխատանքից ավելի մեծ բավարարվածության և երկարաժամկետ հեռանկարում արտադրողականության բարձրացման:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Ակնկալվում է պետական եկամուտների համեստ աճ՝ հղի կանանց և կրծքով կերակրող մայրերի թվի նվազման պատճառով, որոնք դուրս կգան աշխատանքից աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման ռիսկերի պատճառով:

Վտանգավոր, ծանր և հատկապես ծանր պայմաններումաշխատող հղիների և կրծքով կերակրող մայրերի, ինչպես նաև նրանց՝ աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման ռիսկերի պատճառով աշատանքից հեռանալու վերաբերյալ համապատասխան վիճակագրության և միտումների բացակայության պատճառով արվել են որոշ ենթադրություններ, որոնք կարելի է վիճարկել, սակայն դրանք շատ համեստ և ողջամիտ են՝ հաշվի առնելով տվյալ խնդրի վերաբերյալ տվյալների բացակայությունը:

Համապատասխան վիճակագրության կազմումն ու հավաքումը պետք է դառնան համապատասխան կառույցների կողմից ձեռնարկվող միջոցառումներից մեկը:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Քաղաքականության 2-րդ տարբերակի (օրենսդրական լուծումներ չենթադրող) հնարավոր ազդեցությունների բացահայտում

Պետական քաղաքականությունը հատկապես կկենտրոնանա բազմակողմ համագործակցության և հղի և կրծքով կերակրող կանանց աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման նպատակով համատեղ գործողությունների ուղղությամբ:

Քաղաքականության 2-րդ տարբերակի իրականացումը ենթադրում է երկարաժամկետ միջոցառումներ և պետական ծախսերի որոշակի աճ հետևյալ ուղղություններով.

- Իրազեկվածության մեծացման և քարոզարշավների իրականացման հետ կապված ծախսեր՝ աշխատողների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մեծացման և գործատուների շրջանում սոցիալական պատասխանատվության խթանման համար. ամենայն հավանականությամբ խոսք կգնա մեկանգամյա, ոչ էական ծախսի մասին:
- Էրացուցիչ անձնակազմի աշխատանքի ընդունման հետ կապված վարչական ծախսերի ավելացում վարձատրության և պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի վճարների համաֆինանսավորման ծախսերի գծով ԱԱՏՄ-ի կանխարգելիչ և վերահսկիչ լիազորություններն ընդլայնելու նպատակով

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Առաջարկված երկու քաղաքականության տարբերակները փոխլրացնում են միմյանց և համակարգված և կշռադատված իրականացման դեպքում կարող են հանգեցնել առավել մեծ արդյունքների:

Առաջարկվող սցենարների ծախս-օգուտ վերլուծությունն իրականացնելու նպատակով հիմնական ցուցանիշների մասով կանխատեսումներ չեն արվել, փոխարենը պարզ վարժություն է իրականացվել առաջարկվող քաղաքականության տարբերակների հետ կապված ծախսերի ակնկալվող աճի և օգուտների քանակական որոշման համար:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Հաշվարկներում օգտագործված հիմնական ենթադրություններն ու և փոփոխականները

Վտանգավոր և վնասակար պայմաններում աշխատող կանանց թիվը գնահատվում է ըստ 2018-2019 թթ. համապատասխան խմբերում աշխատողների թվից: Վտանգավոր և վնասակար պայմաններում աշխատող հղիների և կրծքով կերակրող մայրերի գնահատված թիվը հաշվարկվել է 2018-2019 թթ. զբաղված կանանց ընդհանուր թվաքանակում վերարտադրողական տարիքի (15-44) զբաղված կանանց մասնաբաժնի հիման վրա

Հաշվարկները պարզեցնելու համար կիրառվել են հետևյալ երկու ենթադրությունները.

- Հայաստանում մակրոմիջավայրը, բիզնես միջավայրը և օրենսդրական դաշտը (ներառյալ աշխատանքային օրենսդրությունը), որոնք նպաստում են գոյություն ունեցող աշխատատեղերի պահպանմանը, և աշխատող հղի և կրծքով կերակրող կանանց թիվը առաջիկա 5 տարիների ընթացքում չեն փոխվի:
- Նախատեսված օրենսդրական փոփոխություններն արվում են առանց պետության ծախսերի:

Նկարը՝ այստեղից

Սցենարների ազդեցության վերլուծություն

Քաղաքականության երկու տարբերակների քառամյա ժամանակահատվածում (2022-2025թթ.) զուտ ներկա արժեքներն են.

	Քաղաքականության 1-ին տարբերակ	Քաղաքականության 2-րդ տարբերակ	Քաղաքականության 1-ին և 2-րդ տարբերակների համադրություն
	(Համապատասխան օրենսդրական և նորմատիվային շրջանակի վերանայում)	(միայն հանրային իրազեկման և քարոզչական արշավ)	
Օգուտ (ԶՆԱ)	2,517.5	12,3	2,517.5
Ծախս (ԶՆԱ)	861,6	65,0	865,5
Օգուտ-ծախս (ԶՆԱ)	1,655.9	(52.7)	1,652.0

Չնայած օգուտ-ծախս հարաբերակցությունն փոքր ինչ մեծ է քաղաքականության 1-ին տարբերակի դեպքում, այնուամենայնիվ առաջարկվում է նախընտրել քաղաքականության 1-ին և 2-րդ տարբերակների համադրությունը, քանի որ իրազեկման բարձրացման և շահերի պաշտպանության քարոզարշավը ցանկացած նոր/ուժեղացված քաղաքականության իրականացման անբաժանելի մասն է:

Նկարը՝ այստեղից